

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն թիվ 7(17/18)

Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի գիտիտական խորհրդի 21.06.18 թ.կայացած նիստի

Խորհրդի նիստին մասնակցում էին նրա 36 անդամներից 29-ը (ցուցակը կցվում է):

Օրակարգ`

1. **ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության, Բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնների վարիչների հաշվետվությունները 2017/2018 ուսումնական տարում ամբիոններում կատարված ուսումնամեթոդական և գիտական աշխատանքների վերաբերյալ:**
Ձեկ.՝ ամբիոնների վարիչներ
2. **Տեղեկատվություն 2018/2019 ուս.տարվա ամբիոնային ծանրաբեռնվածությունների մասին:**
Ձեկ.՝ ամբիոնների վարիչներ
3. **Պետական քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները:**
4. **Կուրատորների հաշվետվությունները:**
5. **Ֆակուլտետում ընթացող բարեփոխումների վերաբերյալ:**
Ձեկ.՝ դեկան Խ.Վ. Ներկարարյան
6. **Ընթացիկ հարցեր:**

Օրակարգի 1-ին հարցի կապակցությամբ..

Լսեցին- ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոնի դոցենտ, Ա.Հ.Մակարյանի հաշվետվությունը 2017-2018 ուսումնական տարում ամբիոնում կատարված ուսումնամեթոդական և գիտական աշխատանքների վերաբերյալ: Զեկույցի ընթացքում ներկայացվեց համապատասխան ամբիոնում մեկ տարում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները՝ ըստ ուսումնամեթոդական և գիտական ոլորտների: Բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ա.Հ. Հովհաննիսյանի հաշվետվությունը 2017-2018 ուսումնական տարում ամբիոնում կատարված ուսումնամեթոդական և գիտական աշխատանքների վերաբերյալ: Ամբիոնի վահրչը ներկայացրեց համապատասխան ամբիոնում մեկ տարում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները՝ ըստ ուսումնամեթոդական և գիտական ոլորտների:

Արտատայտվեցին. Հավանություն տալ ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոնի դոցենտ, Ա.Հ.Մակարյանի հաշվետվությանը և 2017/2018 ուսումնական տարում ամբիոնում կատարված ուսումնամեթոդական և գիտական աշխատանքները գնահատել բավարար: Հավանություն տալ Բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի

վարիչ, պրոֆեսոր Ա.Հ. Հովհաննիսյանի հաշվետվությունը և 2017/2018 ուսումնական տարում ամբիոնում կատարված ուսումնամեթոդական և գիտական աշխատանքները գնահատել բավարար:

Որոշեցին.- Հաղորդումն ընդունել ի գիտություն:

Օրակարգի 2-րդ հարցի կապակցությամբ..

Lսեցին- Ֆակուլտետի փոխդեկան ֆ.մ.գ.թ., դոցենտ Վ.Ռ.Թադևոսյանի տեղեկատվությունը 2018/2019 ուսումնական տարվա ամբիոնային ծանրաբեռնվածության մասին: Դիմորդների թվի փոփոխության հետ կապված՝ ներկայացվեց հնարավոր դասախոսական և լաբորանտական ժամաքանակների փոփոխությունը՝ ըստ ամբիոնների:

Որոշեցին.- Հաղորդումն ընդունել ի գիտություն:

Օրակարգի 3-րդ հարցի կապակցությամբ..

Lսեցին- Պետական քննական հանձնաժողովների նախագահներ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր Ա.Հ.Մելիքյանի և տեխ.գիտ.դոկտոր պրոֆեսոր Ս.Խ.Խուդավերդյանի հաշվետվությունները ֆակուլտետում գործող երկու մասնագիտությունների գծով 2017-2018 ուսումնական տարում բակալավրիատի ավարտական աշխատանքների, ինչպես նաև մագիստրատուրայի թեզերի պաշտպանությունների արդյունքների վերաբերյալ:

Արտատայտվեցին.- Ձեկուցողները թվային տվյալներ բերեցին ավարտական աշխատանքների, պետական քննությունների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունների արդյունքների վերաբերյալ: Ձեկուցողները նշեցին, որ ընդհանուր առմամբ գոհ են այս տարվա աշխատանքներից:

Որոշեցին.- Հաստատել պետական քննական հանձնաժողովների նախագահներ պրոֆեսորներ Ա.Հ.Մելիքյանի և Ս.Խ.Խուդավերդյանի հաշվետվությունները ֆակուլտետում գործող երկու մասնագիտությունների գծով 2017-2018 ուսումնական տարում բակալավրիատի ավարտական աշխատանքների, մագիստրատուրայի մագիստրոսական թեզերի պաշտպանությունների արդյունքների վերաբերյալ:

Օրակարգի 4-րդ հարցի կապակցությամբ..

Լսեցին- Հաղորդում ֆակուլտետի կուրատորների աշխատանքի մասին :

Արտատայտվեցին.- Ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Խ.Վ.Ներկարարյանը նշեց, որ ֆակուլտետում կուրատորների աշխատանքը ղեկավարում է դեկանը: Այդ աշխատանքներում ընդգրկված են 4 դասախոսներ: Կուրատորական աշխատանքները վերաբերվում են միայն առաջին կուրսեցիներին: Դեկանը տեղեկացրեց, որ կուրատորների աշխատանքը դեկանատի հետ ակտիվ բնույթ է կրում: Կուրատորները զբաղվում են ուսանողների և՛ ուսումնական, և՛ սոցիալական խնդիրներով:

Որոշեցին.- Հաղորդումն ընդունել ի գիտություն:

Օրակարգի 5-րդ հարցի կապակցությամբ..

Լսեցին- Հաղորդում ֆակուլտետում ընթացող բարեփոխումների վերաբերյալ:

Արտատայտվեցին.- Ֆակուլտետի դեկան ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր Խ.Վ.Ներկարարյանը ներկայացրեց այս հարցի վերաբերյալ հետևյալ առաջարկը:

Հաշվի առնելով տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման առաջնահերթությունը Հայաստանի Հանրապետությունում, աշխարհի առաջատար համալսարանների դրական փորձը և այդ ուղղությամբ ռադիոֆիզիկայի ֆակուլտետում իրականացվող դասընթացների ու գիտական հետազոտությունների ընդգրկումն մասնաբաժինը, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի խորհուրդը դիմում է ԵՊՀ գիտական խորհրդին ֆակուլտետի բարենորոգմանը միտված հետևյալ փոփոխությունների վերաբերյալ առաջարկ ներկայացնել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին.

1. ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետը վերանվանել "Ռադիոֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների" ֆակուլտետ:
2. Ալիքային պրոցեսների տեսության և ֆիզիկայի ամբիոնի հենքի վրա ձևավորել "Կիրառական էլեկտրադինամիկայի և մոդելավորման" ամբիոն, այն համալրելով ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոնի որոշ աշխատակիցներով:

3. Բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի հենքի վրա ձևավորել “Հեռահաղորդակցության և ազդանշանների մշակման” ամբիոն, այն համալրելով ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոնի որոշ աշխատակիցներով:

4. ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոնը վերանվանել “Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի” ամբիոն:

Առաջարկը դնել բաց քվեարկության: Խորհրդի նիստին ներկա են եղել 36 անդամներից 29-ը, քվեարկությանը մասնակցել են՝ 29-ը: Արդյունքներն այսպիսին են՝ կողմ՝ 23, դեմ՝ 2, ձեռնպահ՝ 4:

Որոշեցին.- Ձայների մեծամասնությամբ հաստատել առաջարկը:

Օրակարգի ընթացիկ հարցերում

Լսեցին.- Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի “ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության” ամբիոնի **դոցենտի** պաշտոնի համար հայտարարված մրցույթի հարցը:

Արտահայտվեցին.- Ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, ֆիզ. մաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ.Հաջյանը հայտնեց, որ այդ տեղի համար դիմել է ֆիզ.մաթ. գիտ. թեկնածու **Վ.Թադևոսյանը**: Նա ծանոթացրեց ներկայացված անձնական գործի տվյալների հետ: Դրականապես արտահայտվեց նաև **"ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության"** ամբիոնի դոցենտ ֆիզ.մաթ. գիտ. թեկնածու Ա.Հ. Մակարյանը:

Որոշեցին.- **"ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության"** ամբիոնի դոցենտի պաշտոնի համար **Վ.Թադևոսյանի** ընտրության հարցը, ըստ կանոնակարգի, դնել փակ քվեարկության: Այդ կապակցությամբ բաց քվեարկությամբ ընտրվեց հաշվիչ հանձնաժողով՝ Կ. Ղամբարյան, Ա. Բարաջանյան և Բ.Հովհաննիսյան (ուսանող) կազմով:

Լսեցին.- Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝ Կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի պրոֆեսոր, ֆ. մ. գ. դ. Կ. Մ. Ղամբարյանի հաղորդումը քվեարկության արդյունքների մասին: Խորհրդի նիստին ներկա են եղել 36 անդամներից 29-ը, քվեարկությանը մասնակցել են՝ 29-ը: Արդյունքներն այսպիսին են՝

կողմ՝ 28, դեմ՝ 0, անվավեր՝ 1

Որոշեցին.- Հաստատել հաշվիչ հանձնաժողովի նախագահի ներկայացրած արդյունքները, որոնց համաձայն ռադիոֆիզիկայի ֆակուլտետի "ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության" ամբիոնի դոցենտի տեղի համար հայտարարված մրցույթի հիման վրա **Վահե Ռազմիկի Թադևոսյանը** ընտրվում է այդ պաշտոնում:

Օրակարգը սպառված է:

**Գիտական խորհրդի նախագահ,
պրոֆեսոր՝**

Խ. Վ. Ներկարարյան

Գիտքարտուղար,

Հ.Ա. Շահինյան